

ՆՈՒՔԱՐՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԹՂԹԱՊԱՆԱԿԸ ՍԵՔԱՍՏԻԱՅԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՈՒ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ Ռ.Ա.*

Հայոց ցեղասպանությունից անմիջապես հետո սկսվել է վկայությունների արձանագրման լայնածավալ աշխատանք, որի առանցքային արդյունքներն ամփոփված են երեք հիմնական հավաքագրումներում՝ Կ. Պոլսի, Կովկասյան և Փարիզի հավաքածուներում¹:

Հայոց ցեղասպանության՝ կոտորածների և տեղահանությունների ամբողջական գործընթացի հիմնական ականատեսներն ընդգրկված են եղել թիրախավորված խմբերում (երբեմն եղել են նաև այլազգիներ), ուստի տեղահանության պատմության ուսումնասիրության համար առանձնակի նշանակություն են ձեռք բերում վերապրողների վկայությունները, որոնք առնչվում են տարբեր վայրերում տեղի ունեցող իրադարձությունների նկարագրությանը: Օսմանյան սկզբնաղբյուրների հաղորդած տվյալները, սակայն, վերաբերում են գլխավորապես կայսերական կամ գավառային վերնախավերի քառուղիներում տեղի ունեցած իրադարձություններին, որոնցում, ի դեպ, բաց են թողնված տարբեր վայրերում իրականացված կոտորածների ու տեղահանությունների մանրամասներ: Այսպիսով՝ խիստ կարևորվում են բուն իրադարձությունների մասնակիցների վկայությունները: Մեծարժեք են ցեղասպանությունից անմիջապես հետո արձանագրված վկայությունները, որոնց մի մասը հավաքել և գրառել է Արամ Անտոնյանը:

* Հայոց ցեղասպանության թանգարանի նստիտուտի ասպիրանտ, ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի, ցեղասպանագիտության բաժնի լաբորանտ, robertsukiasyan@yahoo.com, հոդվածի ընդունման օրը՝ 07.03.2019, տպագրության է երաշխավորել գիտական ղեկավար, պատմ. գիտ. դոկտոր Հ. Դեմոյանը:

¹ Հավաքածուների ստեղծման պատմության և վկայությունների արժևորման մասին մանրամասն տե՛ս **Adjemian B. et Kévorkian R.** *Témoignages de rescapés et connaissance du génocide de 1915-1916 // Études arméniennes contemporaines [En ligne], 5|2015, mis en ligne le 15 juillet 2015, consulté le 22 janvier 2019. URL: <http://journals.openedition.org/eac/755>; DOI : 10.4000/eac.755.*

Դրանք ի պահ են տրվել Նուբարյան մատենադարանին, որտեղ պահվում են առ այսօր:

Առաջին աշխարհամարտի սկզբնավորման օրերից Ա. Անտոնյանը նվիրվել է Հայոց ցեղասպանության վերաբերյալ փաստահավաք գործին: Հալեպում նա արձանագրել է սեփական վկայությունները, հավաքել հարյուրավոր վերապրողների հուշեր, ինչպես նաև օսմանյան գաղտնի փաստաթղթեր (դրանց իսկությունը երկար ժամանակ կասկածի տակ էր դրվում), որոնք հետագայում հրատարակվել են²: Նրա հավաքած նյութերը Նուբարյան մատենադարանում դասակարգվում են աշխարհագրական սկզբունքով և պահվում առանձին թղթապանակներում:

Անդրադառնանք միայն Սեբաստիայի վիլայեթում և դրանից դուրս սեբաստացիների հետ տեղի ունեցած ցեղասպանական գործողությունները ներկայացնող՝ «Սեբաստիայի տեղահանություններ և կոտորածներ» 49-րդ թղթածրարին, մասնավորապես դրանում տեղ գտած նյութերի ձեռքբերման պատմությանը և ամփոփ բովանդակությանը: Թղթածրարն ունի 190 թերթ և ներառում է 12 գործ³, որի փաստաթղթերը ստորև կներկայացվեն ըստ արխիվային համարակալման հերթականության:

1. Կարապետ Գաբիկյան՝ «Վերհուշումները»⁴: Տեքստի սկզբում ներկայացվում են թուրք զինվորների թունավորման հայտնի սադրանքի մանրամասնությունները, և տրվում են կարևոր պարզաբանումներ⁵: 1915 թ. հունվարի 5/6-ին Սեբաստիայի նորակառուց զինվորական շինություններում գտնվող թուրք զինվորների ինքնազգացողությունը վատացել էր, որը դիտարկվել էր իբրև հայերի կազմակերպած թունավորում: Ըստ հեղինակի՝ զինվորների ինքնազգացողության վատթարացման պատճառը եղել է

² **Անտոնեան Ա.**, Այն սեւ օրերուն... (Հայրենիք, Պոսթըն, 1919), **նույնի՝** Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները եւ Թալէադ փաշա: Պաշտօնական հեռագիրներ բնագիրներու ստորագրութեամբ եւ բազմաթիւ պատկերներով, Պոսթըն, 1921: Անտոնյանի Հալեպում կատարած փաստահավաք գործունեության մասին մանրամասն տե՛ս **Մինասյան Մ.**, Արամ Անտոնեան եւ ցեղասպանութեան վաւերագրումի իր աշխատանքը Հալէպի մէջ, «Գանձասար» շաբաթաթերթ, Հալէպ, 24 ապրիլ, 2018, էջ 4-6:

³ Թղթապանակը հասանելի է նաև առցանց՝ Նուբարյան մատենադարանի կայքում՝ http://www.bnulibrary.org/images/archives/fonds_andonian_new_pdf/Andonian49_Sebastia.pdf:

⁴ Fonds Andonian – Matériaux pour l’histoire du génocide, Dossier 49 Massacres et déportations à Sébaste, **Գաբիկյան Կ.**, Վերյուշումները, էջ 0001-0004:

⁵ **Գաբիկեան Կ.**, Եղեռնապատում. Փոքուն հայոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ, Պոսթըն (Հայրենիք, 1924, էջ 592), **Kévorkian R.** The Armenian genocide. A complete history, London, New York, 2011, p. 431-432.

շինության պատերից արձակված տաքացած կիրը: Նա նշում է, որ Սեբաստիայում պատերի ջերմամեկուսացման համար հայերը կիրառում էին կիրով պատելու մեթոդը: Բնակիչները, սակայն, հատուկ միջոցառումներ էին ձեռնարկում կրի հարակից ազդեցություններից խուսափելու համար, որոնց թուրք զինվորները չէին հետևել: Դրա հետևանքով նրանց ինքնազգացողությունը վատացել էր: Շահարկելով այս և հարակից մի քանի այլ հանգամանքներ՝ հայ զինվորների բացակայությունը տվյալ զորամասից, այլ հացահատիկի օգտագործմամբ պայմանավորված հացի գույնը, շների թունավորումը⁶ նշված իրողությունը ներկայացվում է որպես թուրք զինվորների դեմ հայերի կատարած քայլ, որը մեծ հնչեղություն է ստանում՝ դառնալով նախացեղասպանական փուլի կարևոր հանգրվանային կետ: Փաստաթուղթը շարունակվում է Մեսրոպ Քաջբերունու՝ Չանակ-Կալեյի մասին հուշերով: Այն եզրափակվում է զինվորական աշխատավորական ջոկատների կոտորածների և դրանց պատասխանատուների մասին տեղեկություններով:

2. Անհայտ հեղինակ՝ «Սեբաստիա եւ իր գիւղերը (Սվազի վիլայեթ)»⁷ փաստաթուղթը հաղորդում է նախացեղասպանական փուլի կարևոր մանրամասներ, որոնք ներառում են տեղահանությունը հայտարարելու մասին ժողովրդին բաժանված նամակներին, զինվորական իշխանությունների կողմից գույքի առգրավումներին, զինվորագրությանը, հայ պաշտոնյաների պաշտոնանկություններին, հայերի զինաթափմանը, չեթեների գաղտնի խմբերի կազմակերպմանը, հացի թունավորման վերոնշյալ խնդրին, վրդ. Սահակ Օդաբաշյանի սպանությանը, Էնվերի՝ Սեբաստիա այցին, Բյուրք գյուղի ոչնչացմանն ու ռուս զերիններին առնչվող հարցեր: Հեղինակը առանձին-առանձին հիշատակում է Կովտուն գյուղի իրադարձությունները՝ անդրադառնալով սեբաստացի Մուրադի ձերբակալման փորձերին: Ներկայացվում են հայկական գյուղերի կողմից թուրքական զորքի սպասարկումն ապահովելու մասին տեղեկություններ: Փաստաթուղթում հիշատակվում է նաև Սեբաստիայում գործունեություն ծավալած միսիոներ դոկտոր Քլարքը:

⁶ Fonds Andonian – Matériaux pour l’histoire du génocide, Dossier 49 Massacres et déportations à Sébaste, **Գաբիկյան Կ.**, Վերլուծումները, էջ 0001:

⁷ Fonds Andonian – Matériaux pour l’histoire du génocide, Dossier 49 Massacres et déportations à Sébaste, Սեբաստիա եւ իր գիւղերը (Սվազի վիլայեթ), էջ 0005-0014 շրջ:

3. Կարապետ Գաբրիլյան՝ «Սեբաստիոյ մասին անցեալ թե եւ ժամանակակից համառօտ ծանոթութիւններ»⁸ փաստաթուղթը պարունակում է Սեբաստիայի Ս. Նշան, Ս. Հրեշտակապետ, Անապատ, Խունրկտուր, Ս. Հակոբ, Ս. Թագավոր վանքերի մասին տեղեկություններ: Ներկայացվում են պատմական և աշխարհագրական տեղեկություններ Սեբաստիա տեղանվան ծագման, տեղագրության մասին: Նշված են նաև հակիրճ տեղեկություններ՝ կրոնական, կրթական, աղքատախնամ և որբախնամ հաստատությունների, Ազգային հիվանդանոցի, սեբաստահայերի Սենեքերիմյան երիտասարդական միության, թատերական խմբի, տպարանների և բժիշկների մասին:

4. Անհայտ հեղինակ՝ անվերնագիր նամակ՝ ուղղված Կ. Պոլսում 1891-1892 թթ. Անգլիայի դեսպան Քլեր Ֆորդին⁹: Հեղինակն իր բողոքն է հայտնում հայ բնակչության դեմ իրականացվող հալածանքների, անհիմն բանտարկությունների, կրոնական ազատության սահմանափակման, մամուլի ազատության, զինվորական տուրքի, հոգևորականների հանդեպ ճնշումների, իշխանավորների կամայականությունների, ինչպես նաև Սեբաստիա վիլայեթում տիրող իրավիճակի վերաբերյալ կառավարության հաղորդած կեղծ տվյալների մասին: Նամակի վերջում նա պատրաստակամություն է հայտնում հաստատելու իր հաղորդած տվյալները, եթե ձևավորվի եվրոպական քննիչ հանձնախումբ:

5. Կարապետ Գաբրիլյան՝ «Տեղեկագիր Սեբաստիոյ եւ շրջակայից հայոց տարագրութեան եւ բնաջնջումի»¹⁰: Աշխատանքը հեղինակի «եղեռնապատումի»¹¹ տարբերակներից մեկն է: Մեզ հայտնի առաջին տարբերակը Գաբրիլյանը գրառել է տարագրության ճանապարհի հանգրվաններից մեկում՝ Րաքքայում, որտեղ հակիրճ ներկայացրել է տարագրության պատմությունը: Այստեղ իր գրառումները նա հանձնել է Սարգիս Մանուկյան անունով մի անձի, որը դրանք Կարինի տարագրության տեղեկագրի

⁸ Fonds Andonian – Matériaux pour l’histoire du génocide, Dossier 49 Massacres et déportations à Sébaste, **Գաբրիլյան Կ.**, Սեբաստիոյ մասին անցեալ եւ ժամանակակից համառօտ ծանոթութիւններ, էջ 0015-0020 շրջ.:

⁹ Fonds Andonian – Matériaux pour l’histoire du génocide, Dossier 49 Massacres et déportations à Sébaste, Անհայտ հեղինակ – անվերնագիր նամակ Քլեր Ֆորդին, էջ 0021:

¹⁰ Fonds Andonian – Matériaux pour l’histoire du génocide, Dossier 49 Massacres et déportations à Sébaste, **Գաբրիլյան Կ.**, Տեղեկագիր Սեբաստիոյ եւ շրջակայից հայոց տարագրութեան եւ բնաջնջումի, էջ 0051-0112-0022-0049:

¹¹ Նույն տեղում, էջ 0051-0112-0022-0049, 0135-0137:

հետ պետք է հանձնել Հալեպի գերմանական հյուպատոսին: Վերջինս, սակայն, սպառնալիքներով պայմանավորված՝ ոչնչացնում է «Եղեռնապատումի» մեզ հայտնի առաջին տարբերակը¹²: Հալեպ հասնելուց հետո Գաբրիլյանը վերադարձել է «Եղեռնապատումի» վերաշարադրման գործին¹³: Նա տեղում ծանոթացել է Արամ Անտոնյանի հետ և աշխատակցել նրան վերապրողների հուշերի համակարգման գործում: Այստեղ նա Անտոնյանին է փոխանցել «Եղեռնապատումը», որին վերջինս հավանություն է տվել՝ հայտնելով, որ ձեռագիրն առանձին հրատարակության պետք է արժանանա, և խոստացել է գործընթացի կազմակերպման համար միջոցներ գտնել և «դեռ պիտի գտնե»¹⁴: Գաբրիլյանը 1920 թ. ստացել է մի շարք հրավերներ, որոնցից նախապատվությունը տվել է Երուսաղեմի պատրիարքության հրավերին: Այստեղ նա գրառել է տարագրության պատմության հերթական երրորդ տարբերակը և այն ուղարկել ԱՄՆ՝ Չիկագոյում հրատարակվող՝ Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության «Երիտասարդ Հայաստան» թերթում տպագրելու համար¹⁵: Ի դեպ, «Եղեռնապատումի» այս օրինակն ուղարկվել է հատվածաբար: Մեջբերենք նրա նամակներից մի հատված. «Եղեռնապատումի 164-178 էջ կարուած ծրարին օրինակը դրկեցի շատ առաջները, ապահովագրեալ ծրարով, Ձեզ հասա՛ւ արդեօք: Թերթի նամակատուփովը իմացնեիք: Եղեռնապատումի ամենէն պատկերոտ էջն է ատ կտորը, և մասնաւոր. ծանոթութեամբ մը հրատարակելիք թերթին ո՛ր թիւ-էջ մինչև ո՛ր թիւին մեջտեղը ըլլաը ըսելով: Վեր-

¹² **Գաբրիլեան Կ.**, Եղեռնապատում Սեբաստիոյ. Փոքուն Հայոց եւ նորին մեծի Մայրաքաղաքին, մաս 113 (Երիտասարդ Հայաստան, 1920, թիւ 23, յունիս 22):

¹³ **Գաբրիլեան Կ.**, Եղեռնապատում. Փոքուն հայոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ (Հայրենիք, 1924, էջ 543):

¹⁴ Նույն տեղում, էջ 544:

¹⁵ 1919 թ. հոկտեմբեր 18-ից թիւ 48, 51-60, 65-69, 1920 թ. 70-74, 79, 80-82, 85-99, մայիս 1-ից թիւ 1-4, 8-34, 48-81, 84, 1921 թ. 83-84, 85-92, 96, 98, 100, 103, 105, 114, 116, 118, մայիս 9-ից թիւ 4, 8, 10, 11, 13, 15, 17, 21, 23, 25, 26, 31, 35, 36, 48, 1921 թ.-ի մարտի 104-րդ համարը մեզ հասանելի չէ, սակայն ենթադրաբար դրա մեջ նույնպես զետեղված է «Եղեռնապատումից» մի հատված: Այն Արիս Սևակի թարգմանությամբ և Առաքել Պատրիկի համառոտագրությամբ լույս է տեսել անգլերեն (**Kapigian G.** Yeghernabadoum (Story of Genocide), Pan-Sebastia Rehabilitation Union, Inc., N.Y., 1978), իսկ Քնարիկ Տեր-Դավթյանի թարգմանությամբ և ծանոթագրություններով՝ ռուսերեն (**Габикян К.** История уничтожения Малой Армении и ее великой столицы Себастии, Е., 2015): Գրքի հայերեն տարբերակը վերահրատարակվել է Լիբանանում՝ «Եղեռնապատում»: Փոքուն հայոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ / Գուժկան Սեբաստիոյ, հրատ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, 2006:

ջին ծրարներով մինչև 325 էջը դրկած եմ: Մնացեալը հոստեղէն վերջ կը հասցուցնեմ»¹⁶: Տպագրվելուց հետո «Եղեռնապատումի» բնագիրը նույնպես կորած է համարվում¹⁷, և վերջին՝ չորրորդ անգամ Գաբիկյանը այն ամբողջացրել է ավելի քան 600 տպագրական էջերի սահմանում՝ «Սեբաստիոյ Վերաշինութեան Միութեան» մեկենասությամբ և ի վերջո գրքի տեսքով այն հրատարակել Բոստոնում¹⁸:

«Եղեռնապատումը» Սեբաստիայի ցեղասպանության պատմությանը նվիրված ամենածավալուն աշխատանքն է: Կ. Գաբիկյանը քաջատեղյակ է գավառի կյանքի մանրամասներին, քաղաքական անցուղարձին: Նյութը շարադրված է բանիմաց ուսումնասիրող և աչալուրջ ականատեսի կողմից, որը հուշագրությունը դարձնում է միաժամանակ վկայություն և հետազոտություն: Այն ներառում է ոչ միայն նախացեղասպանական փուլին, այլև բուն իրադարձություններին առնչվող կարևոր դրվագներ: Հեղինակը հանգամանակից ներկայացնում է գործընթացի ամբողջ ընթացքը՝ տալով աշխարհագրական, թվային տվյալների մանրամասնություններ: Նա չի շրջանցում նաև ոճրագործներին, և ըստ գործողությունների տրամաբանության ու ընթացքի՝ կատարում է կարևոր եզրակացություններ: «Մոռցուած կետեր»¹⁹ վերնագրի տակ նա տեղեկություններ է հաղորդում Սեբաստացի Մուրադի և ոճրագործների կենսագրական տվյալների մասին:

6. Հայկանույշ Ջառացյան՝ «Սըվագ»²⁰:

Հեղինակը եղել է Սեբաստիա քաղաքից տեղահանվածների թվում: Նա հաղորդել է մանրամասներ ընդհանուր զորակոչի, հայերի կողմից բանակին սննդի մատակարարման պարտավորության, զենքերի բռնագրավման, տղամարդկանց բանտարկության մասին: Հ. Ջառացյանը շարունակել է իր հուշերը՝ ներկայացնելով Սեբաստիա-Կանգալ-Քյոթու խան-Հասան Չելեպի-Գըրգ-Գյոզ, Մալաթիա-Ֆոնջըլար-Գանլը-Դերե-Սուրուժ-Հալեպ-Այնթափ երթուղին:

¹⁶ ՀԱԱ, Փիլիկյան Ներսես, ֆ. 408, ց. 1, գ. 193, էջ 15-15 շրջ:

¹⁷ **Գաբիկեան Կ.**, Բազմիքը Սեբաստիայ Գաւառալեզուի, Հրատարակութիւն հասանեբաստիայ վերաշինաց միութեան Ամերիկայի, Երուսաղեմ, 1952, էջ Ե:

¹⁸ **Գաբիկեան Կ.**, Եղեռնապատում. Փոքուն հայոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ (Հայրենիք, Պոսթըն, 1924, էջ 6):

¹⁹ Fonds Andonian – Matériaux pour l’histoire du génocide, Dossier 49 Massacres et déportations à Sébaste, **Գաբիկեան Կ.**, Մոռցուած կետեր, էջ 0135-0137:

²⁰ Fonds Andonian – Matériaux pour l’histoire du génocide, Dossier 49 Massacres et déportations à Sébaste, Հայկանույշ Ջառացյան, Սըվագ, էջ 0113-0116:

Նրա հուշերն ամփոփում են կարևոր տեղեկություններ տեղահանության իրականացման եղանակների և ընթացքի մասին: Դրանցում կան տեղեկություններ ժանդարմների հարստահարումների, թալանի մեթոդների, միտումնավոր անգործության, փրկագներ չվճարելու պարագայում բռնությունների, այրումների, քրդական հարձակումների, տղամարդկանց, այդ թվում՝ Եփրատի վրա իրականացված սպանությունների, արաբների բռնությունների, սննդի բացակայության, կաշառքով մահվանից ազատագրվելու, հարստությունները թաքցնելու ձևերի, կյանքի համար անհրաժեշտ կենսապայմանների բացակայության մասին:

7. Անհայտ հեղինակ՝ «Սեբաստիա»²¹:

Փաստաթուղթը գրված է Բեռլին-Բաղդադ երկաթուղու մուտքերի և ելքերի գրանցման համար նախատեսված ձևաթղթերի վրա: Համադրելով այս հանգամանքը Արամ Անտոնյանի՝ Հալեպում գտնվելու և իր ծավալած փաստահավաք գործունեության հետ՝ հնարավոր է եզրակացնել, որ այն կազմվել է Հալեպում: Փաստաթուղթը սկսվում է Սեբաստիա վիլայեթի բնակավայրերի մանրամասն վիճակագրությամբ՝ ներառելով Սեբաստիա, Հաֆիզ, Գոչկիրի, Տիվրիկ, Կանգալ, Կյուրին, Թոնուս, Ջեզիրե, Շապին Գարահիսար, Թոգաթ, Ելդըզլի, Դերենդե, Գոչիսար վիճակագրությունները՝ ըստ բնակչության քանակի և էթնիկ կազմի: Ներկայացվում են գավառակների տեղահանության մասին հակիրճ տեղեկություններ: Փաստաթուղթը պարունակում է երթուղիների և անցումային կայանների մանրամասն քարտեզներ, որոնք խիստ կարևոր նշանակություն ունեն: Առանձին ենթագրերով տեղեկություններ են հաղորդվում Սեբաստիայում գործունեություն ծավալած նշանավոր ամերիկացի միսիոներուհի Մերի Գրեֆեմի և Սեբաստիայի նահանգապետ Մուամմերի վերաբերյալ:

8. Կ. Պոլսի «Ժողովուրդ» թերթի կտրոնները²² Սեբաստիայում տեղի ունեցած ցեղասպան գործողություններին վերաբերող երկու հոդվածներն են: Առաջինը վերնագրված է «Ինչպե՞ս նահատակեցաւ Թոգատի առաջնորդ Շաարշ ծ. վրդ. Սահակեանը (ականատեսի պատմութիւն)»՝ Հ.Ղ. ստորագրությամբ: Ենթադրաբար ստորագրողը Հայկազն Ղազարյանն է, որն

²¹ Fonds Andonian – Matériaux pour l’histoire du génocide, Dossier 49 Massacres et déportations à Sébaste, Անհայտ հեղինակ, Սեբաստիա, էջ 0117-134, 0138-139:

²² Ղ.Հ., Ի՞նչպես նահատակեցաւ Թոգատի առաջնորդ Շաարշ ծ. վրդ. Սահակեանը (ականատեսի պատմութիւն) (Ժողովուրդ, 1918, նոյեմբեր 30/13, թիւ 41):

այդ ժամանակահատվածում Կ. Պոլսում գործող սեբաստահայերի Սենեքերիմյան միության «Փաստահավաք մասնախումբի» անդամն էր²³: Սույն հոդվածում անդրադարձ է կատարվում թե՛ 1915 թ. մայիսի վերջին Մուամմերի Թոկաթ կատարած այցի և թե՛ հունիսի 1-ին Շավարշ վարդապետի վերջին քարոզի մասին, որի ընթացքում նա ժողովրդին կոչ է անում հանձնել զենքերը: Ըստ այս վկայության՝ ժողովուրդը հետևում է նրա կոչին: Հունիսի 3-ին վարդապետը հրավիրվում է կառավարչատուն, որտեղ նրան հայտնում են աքսորի որոշման մասին և նույն երեկոյան քաղաքից դուրս գալու ժամանակ սպանում: Այս հոդվածին թերթում հաջորդել է «Ինչպես տեղահան ըրին Սեբաստիան (Ականատեսի պատմութիւն II)» վերնագիրը կրող նյութը՝ Պ. ստորագրությամբ²⁴: Հոդվածում ներկայացվում են մանրամասներ հունիսին Սեբաստիայում բանտարկված տղամարդկանց կոտորածների մասին, բերվում են պատասխանատուների ցանկը, նրանց զբաղեցրած պաշտոնները, ոմանց առնչությունները համիդյան կոտորածներին, և նշվում է, որ ջարդարարները գրեթե ամբողջությամբ իթթիհատականներ էին: Կան նաև տեղեկություններ ջարդերից հետո տղամարդկանց հագուստը գողանալու և Սեբաստիայում դրանք աճուրդով վաճառելու մասին: Ներկայացվում է հայ աշխատանքային ջրկատների բնաջնջման պատասխանատուների մի ցանկ ևս:

9. Գոհարիկ Գաբիկյան – «Սըվազ», 1918²⁵:

Հեղինակը հայտնում է Կավոա գյուղի թուրքական զորքերի սննդի և բնակարաններով ապահովման պարտավորության, Սեբաստացի Մուրադի գործունեության, տղամարդկանց ձերբակալությունների, նրանց՝ բանտից փրկագնով ազատելու հնարավորության մասին: Վերապրողը նկարագրում է իր անցած Կամիս-Ղանդալ-Քյոթու խան-Հասան-Չելեպի-Հասան-Պատրիկ-Ալաճա խան-Գըրկ-քյոզ-Մալաթիա-Ֆռնջլար-Ուրֆա-Սուրուճ երթուղին: Նա հաղորդում է նաև մանրամասներ քարավանի ժողովրդագրության, կայաններում ոստիկանների փոփոխության, ժանդարմների միտումնավոր անգործության, տղամարդկանց՝ կանանց հագուստով ծայտվելու

²³ Սեբաստահայերի «Սենեքերիմյան միության» ժողովների արձանագրությունները (ձեռագիր), ՀԱԱ, ֆ. 439, ց. 1, գ. 19:

²⁴ Պ., Ինչպես տեղահան ըրին Սեբաստիան (Ականատեսի պատմութիւն II) (Ժողովուրդ, 1918, նոյեմբեր 30/13, թիւ 41):

²⁵ Fonds Andonian – Matériaux pour l’histoire du génocide, Dossier 49 Massacres et déportations à Sébaste, Գոհարիկ Գաբիկյան, Սըվազ, 0144-0149 շրջ.:

մեթոդի, քրդական հարձակումների, փոխադրամիջոցների բռնագրավման, տղամարդկանց առանձնացնելու և սպանելու, կենսապայմանների բացակայության, քրդերի կողմից աղջիկների հափշտակությունների, Եփրատ գետն անցնելու մասին:

10. Elise D. Garabédian – «Mémoire d'une jeune fille arménienne de Sivas publiée dans le journal «Arev» d'Alexandrie. Au pays du Zouloum»²⁶.

Ֆրանսերենով գրված այս հուշերը պատկանում են ցեղասպանությունը վերապրած Էլիզա Տեր-Կարապետյանին: Հուշերի հայերեն տարբերակը հոդվածաշարով հրատարակվել է Ալեքսանդրայի «Արեւ» թերթում²⁷: Հեղինակը նկարագրում է տեղահանության պատմությունը՝ մանրամասներ հաղորդելով քրդական հարձակումների, Մալաթիայի մոտակայքից աղջիկներին հափշտակելու, երեխաներին այնտեղ տեղափոխելու, կենսապայմանների բացակայության հետևանքով մահվան դեպքերի, հսկիչ ժանդարմների միտումնավոր անգործության, արաբների վայրագությունների, պարբերական խուզարկությունների և թալանի, չերքեզների հարձակումների, բարյացակամ տրամադրված ժանդարմների, Սուրուճ գյուղաքաղաքի բնակչության լավ վերաբերմունքի մասին: Մանրակրկիտ նկարագրվում են Բաբ-Ռաքքա-Սաբա-Դեր Ջոր երթուղին և տեղահանության ընթացքում տեղի ունեցած իրադարձությունները:

11. Անհայտ հեղինակ՝ «Պատմություն Վարդանուշ Գասմանեանի սիվասցի»²⁸:

Վերապրողը Սեբաստիայից դուրս եկած չորրորդ քարավանի տարագրյալներից է, որը տվյալներ է հաղորդում քարավանի տեղաշարժման ժամկետների, տեղահանվող խմբի անդամների քանակի, ուղեկցողների մասին: Հեղինակը ներկայացնում է տեղահանման երթուղին՝ Սեբաստիա-Հասան Պատրիկ-Հասան-Չելեպի-Գանլը-դերե-Գըրկ-Գյոզ, Ռաս-ուլ-այն-Ջերջիփ շրջակայքի գյուղեր: Նա պատմում է ճանապարհին տեղի ունեցած

²⁶ Fonds Andonian – Matériaux pour l'histoire du génocide, Dossier 49 Massacres et déportations à Sébaste, Garabédian D., Elise, Mémoire d'une jeune fille arménienne de Sivas publiée dans le journal «Arev» d'Alexandrie. Au pays du Zouloum, էջ 0150-0170:

²⁷ **Կարապետեան Է.**, Ջուլումի երկրէն: Սեբաստացի աղջկան մը նամակը (Արեւ, 1917, թիւ 94 (404)-թիւ 97 (407)):

²⁸ Fonds Andonian – Matériaux pour l'histoire du génocide, Dossier 49 Massacres et déportations à Sébaste, Անհայտ հեղինակ, Պատմություն Վարդանուշ Գասմանեանի սիվասցի, էջ 0171-0176: Ներքին համարակալումով՝ 5, 6, 7 էջերը բացակայում են:

թալանի, բռնությունների, քրդերի և չեչենների հարձակումների, երթևեկության միջոցներից զրկվելու, աղջիկների հափշտակումների մասին, հաղորդում է նաև ընթացիկ վիճակագրություններ: Իր հուշերը հեղինակն ավարտում է անապատային կայանների կյանքի մասին տեղեկություններով:

12. Խաչատուր Ֆեներջյան, Անուշավան Սահակյան, Հովհաննես Մինասյան, Հարություն Ճղյան, Կարապետ Արծրունյան, Արամ Օնբաշյան, Նազարեթ Տարաքչյան, Ոսկան Կորկոտյան՝ «Ամբաստանագիր-տեղեկագիր Սեբաստիոյ կուսակալութեան»:

Փաստաթուղթը պատրաստվել և վավերացվել է Հալեպում 1919 թ. փետրվարի 27-ին «Սեբաստիոյ նահանգի գաղթականացախ յանձնախումբի» կողմից²⁹: Հալեպում ստեղծվել էր 32 հայրենակցական միություն, որոնց համագումարն էր Միջգավառային միությունը՝ պրոֆ. Հայկ Արամյանի ատենապետությամբ³⁰: Խնդիր էր դրվել յուրաքանչյուր գյուղի և քաղաքի ներկայացուցիչների ջանքերով պատրաստելու մանրամասն տեղեկագրեր³¹: «Ամբաստանագիր-տեղեկագիրը» թեմային առնչվող ամենավաղ և իր բնույթով իրադարձությունները ամենահամակարգված կերպով ներկայացնող փաստաթուղթն է՝ բաղկացած 26 էջից, և ներառում է մանրամասն պատմական ու վիճակագրական տվյալներ Սեբաստիայի կոտորածների, տեղահանության և նյութական վնասների մասին: Փաստաթղթում նաև ամփոփ ներկայացվում են նախացեղասպանական շրջանի հանգուցային իրադարձությունները (Սահակ վրդ. Օդաբաշյանի սպանությունը, տղամարդկանց, կուսակցականների, առևտրականների ձերբակալություններ): Այն ներառում է նաև 1915 թ. ապրիլ-մայիսին Հաֆիզ գավառակում տեղի ունեցած զանգվածային ձերբակալությունների, հայ աշխատանքային գումարտակների ոչնչացման, բնակչության զինաթափման մասին տեղեկություններ: Շարադրված են նաև բռնագաղթի երթուղիների և կայանների բնորոշիչ կետերի հակիրճ նկարագրությունները, ինչպես նաև շարժական ու անշարժ գույքի բռնագրավումներից պատճառված վնասների վիճա-

²⁹ Լ.Վ., Ամբաստանագիր տեղեկագիրներ (Հայկազեան հայագիտական հանդես, 1995, էջ 557):

³⁰ Արամեան Ա. Հայկ (Ուլնիաժովթ), Մեծ Եղեռնի Պատգամ. Հայոց Տանթեական. Քաարան եւ հրաշալի յարութիւն, տպ. Տօնիկեան, Պէյրութ, 1970, էջ 177:

³¹ Fonds Andonian – Matériaux pour l’histoire du génocide, Dossier 49 Massacres et déportations à Sébaste, Ամբաստանագիր-տեղեկագիր Սեբաստիոյ կուսակալութեան, էջ 0177-190 շրջ.:

կազրությունը: Փաստաթղթում առկա են Սեբաստիայի, Ամասիայի, Մարգվանի, Գյումիշ Հաջի-Բյոյի, Թոկաթի, Կյուրինի, Շապին Գարահիսարի կոտորածների և տեղահանության կազմակերպիչների և իրագործողների ցանկեր, տեղեկություններ տնտեսական կարողության, անշարժ գույքերի, մշակութային դրության, կրած վնասների վիճակագրության մասին, ինչպես նաև ցեղասպանական բնույթի հիմնական գործողությունների հակիրճ նկարագրություններ:

Հայկ Արամյանն իր գրքում մեղադրում է Արամ Անտոնյանին՝ հաղորդելով, որ նրա կողմից շուրջ 30 ամբաստանագրեր «նենգութեամբ խլուեցան, իրացուեցան, եւ անոնցմէ լայնօրէն օգտուելէն վերջ, շատ ու շատ հաւանօրէն թուրք լրտէս-գործակատարներուն ծախուեցան ու ոչնչուեցաւ թուրք կառավարութեան կողմէ»³²: Սակայն իրականում ամբաստանագրերը պահպանվել են, և Սեբաստիայի ամբաստանագիր-տեղեկագիրը համալրում է Արամ Անտոնյանի հավաքածուն:

Այսպիսով՝ ակնհայտ է, որ տարբեր ժամանակաշրջաններին առնչվող և տարատեսակ բնույթի փաստաթղթերի (ձեռագիր, մեքենագիր, նամակ, հուշեր, համակարգված հետազոտություններ) այս հավաքածուն ամփոփում է խնդրո առարկա ժամանակահատվածում Սեբաստիայի կրթական, մշակութային, կրոնական, բարեգործական հաստատությունների գործունեությանն առնչվող արժեքավոր տեղեկություններ: Նյութերում առկա են նախացեղասպանական և բուն ցեղասպանության փուլերին վերաբերող բազմաթիվ վիճակագրություններ, ժողովրդագրական մեծարժեք նյութեր, տնտեսական կարողությունների և կորուստների տվյալներ: Դժվար է գերազնահատել Սեբաստիայի տեղահանությունը նկարագրող վերապրողների հուշերը, որոնք հարուստ են տեղային մակարդակի իրադարձությունների տվյալներով և բանալիներ են տեղահանության ընթացքի ու գործարման պատմությունն ընկալելու համար:

³² Արամեան Ա. Հայկ, նշվ. աշխ., էջ 178:

ՆՈՒՔԱՐՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԹՂԹԱՊԱՆԱԿԸ ՍԵՔԱՍՏԻԱՅԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՈՒ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ Ռ.Ա.

Ամփոփում

Հայոց ցեղասպանությունից անմիջապես հետո սկսվել է վկայությունների արձանագրման լայնածավալ աշխատանք, որի հիմնական արդյունքներն ամփոփված են Փարիզի Նուբարյան գրադարանի երեք հիմնական՝ Կովկասյան, Կ. Պոլսի և Արամ Անտոնյանի հավաքածուներում: Տարբեր ժամանակաշրջաններին առնչվող և տարատեսակ բնույթի փաստաթղթերի (ձեռագիր, մեքենագիր, նամակ, հուշեր, համակարգված հետազոտություններ) այս հավաքածուն ամփոփում է խնդրո առարկա ժամանակահատվածում Սեբաստիայի կրթական, մշակութային, կրոնական, բարեգործական հաստատությունների գործունեությանն առնչվող արժեքավոր տեղեկություններ: Թղթածրարում պահվող 12 գործերը կարևորվում են Սեբաստիա վիլայեթի ինչպես նախացեղասպանական փուլի ուսումնասիրման, այնպես էլ բուն ցեղասպանական գործողությունների ուսումնասիրման տեսանկյունից:

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, տեղահանություն, Սեբաստիա, զավառ, Նուբարյան գրադարան, Արամ Անտոնյան, ականատեսների վկայություններ:

ДОСЬЕ БИБЛИОТЕКИ НУБАРЯН О РЕЗНЕ И ДЕПОРТАЦИИ В СЕБАСТИИ

СУКИАСЯН Р.А.

Резюме

В библиотеке Нубарян в Париже хранятся документы, касающиеся геноцида армян, в частности резни и депортации армян Себастии. Документы были собраны Арамом Антоняном и другими. В папке под грифом

"Резня и депортация Себастии" хранится 12 работ, которые являются ключевыми источниками для изучения вилайета Себастии как до геноцида, так и после него. Среди них следует выделить "Рассказ о резне" Карапета Габикяна, являющийся собой важный документ о трагических событиях, имевших место в Себастии.

Ключевые слова – геноцид армян, переселение, Себастиа, провинция, Библиотека Нубарян, Арам Антонян, свидетельства очевидцев.

THE DOSSIER OF NUBARIAN LIBRARY ON THE MASSACRES AND DEPORTATION OF SEBASTIA

R. SUKIASYAN

Abstract

The article is dedicated to the Armenian Genocide testimonies written by Aram Antonyan and others, kept at the Nubarian Library in Paris. In the first part of the study, a general reference is made to the issue of raising the question of the Armenian Genocide in academia and trying to answer to the point why the Armenian testimonies were ignored in that context. The importance and application of these materials to input in the study of Genocide at this stage are highlighted. The 12 works in this folder, their contents and their significance for studying the pre-genocide phase and the genocidal acts of Sebastia Vilayet are presented. A particular reference is made to Karapet Gabikian's "Eghernabadoum" and its versions, one of which is part of this collection.

Key words – Armenian Genocide, deportation, Sebastia, province, Nubarian Library, Aram Antonyan, eyewitness accounts.